

ՇՈՐԹՈՒՄՆԵՐԻ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ՈՐՈՇ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐ*

ԷՐԻԿ ԱՐՁՈՒՄԱՆՅԱՆ

ԱրՊՀ ասպիրանտ

Խոսելով շորթման ընդհանուր կանխումից՝ պետք է հասկանալ, որ, առանց հանրապետությունում սկսված բարեփոխումների ավարտի, տնտեսական կայունացման, ծայրահեղ դժվար է լինելու հասնել տվյալ տեսակի հանցագործության կայունացմանը:

Հանցավորության կանխումը խնդիր է մի շարք ոլորտների համար, որը կարգավորվում է համատեղ, հասարակության ամբողջ ուժով ու սոցիալական մարմինների բոլոր օղակների մասնակցությամբ: [1]

Դրա հետ մեկտեղ անհրաժեշտ է ընդունել, որ հանցագործության կանխման պրակտիկան, որը լուծվում էր համապետական մակարդակով, աստիճանաբար դարձել է հրատապ միայն իրավապահ մարմինների համար: Այդ պատճառով այսօր առաջին պլան են մղվել կանխարգելման այնպիսի միջոցներ, որոնք կիրառվում են իրավապահ մարմինների կողմից՝ հաշվի առնելով ընդհանուր-սոցիալական և հատուկ-քրեածին վիճակի իրատեսականության չափը: [2]

Քաղաքական ոլորտում դա նոր հանրապետության պետականության ձևավորումն ու զարգացումն է, քաղաքական կամքի իրականացման ճանապարհին սոցիալ-բացասական երևույթների հակադրումը՝ բազմակուսակցական պայմանների գործընթացներում:

Սոցիալական ոլորտում (բառի նեղ իմաստով) մեծ հակաքրեածին նշանակություն ունեն այն միջոցները, որոնք ուղղված են սոցիալական բարեփոխումներին՝ օժանդակությանը չուննոր քաղաքացիներին, ընտանեկան կապերի ամրապնդմանը, գործազրկության հետևանքների սահմանափակմանը, մարդկանց արտագաղթի կանխմանը և այլն:

Իրավական ոլորտում դա օրենսդրության կատարելագործումն է՝ նպատակաուղղված հանցավորության կանխարգելմանը՝ ունենալով իրավական տարբեր հասարակական հարաբերությունների կարգավորման առարկաներ (աշխատանքային, ընտանեկան և այլն), որոնք նորմատիվորեն կարգավորված չլինելով, կարող են ապագայում ունենալ քրեածին նշանակություն:

Շորթման ընդհանուր կանխարգելման միջոցառումները ոմանց մոտ առաջացնում են ձերբակալվելու և պատժվելու հնարավոր վտանգ, իսկ ուրիշների մոտ՝ նվազեցնում հանցագործության տուժող դառնալու ռիսկը:

Ընդհանուր կանխարգելումից անհատականի անցումը նշանակում է, որ կա շարժ դեպի կոնկրետի կողմը, քանի որ խնդիրը դառնում է անձի հետ կապված:

Անհատականացմանը բնորոշ են հատուկ որակներ՝ պայմանավորված յուրաքանչյուր կոնկրետ անձի աշխատանքի յուրահատկություններով: Այդ մակար-

* Հոդվածն ընդունվել է 20.01.2013

Հոդվածը տպագրության է երաշխավորել ԵՊՀ քրեական իրավունքի ամբիոնի դոցենտ, ի.գ.թ., Ս.Առաքելյանը:

դակում է կոնկրետացվում անձին և նրա վարքագծին վերաբերող ամբողջ պրակտիկայի եզրակացությունը և եզրահանգումը:

Պրոֆիլակտիկ ներգործությունը սոցիալական կարգավորման հատուկ ձև է: Կարելի է հետևողական լինել և կարգավորել նաև ընդհանուր պրոֆիլակտիկայի այլ գործընթացներ, որոնք վերաբերում են կոնկրետ հանցագործություններին՝ այդ թվում՝ շորթմանը: Պրոֆիլակտիկան պետք է ուղղված լինի հենց այդպիսի կոնկրետ արարքներին: Ընդհանուր պրոֆիլակտիկայի օբյեկտը միշտ կոնկրետացվում է: Պետք է պարզ լինի, որ խոսքը այն հանցագործությունների մասին է, որոնք ուղղված են ուրիշի գույքին:

Ընդհանուր պրոֆիլակտիկան վերաբերում է հասարակության լայն զանգվածին: Ընդհանուր պրոֆիլակտիկայի իմաստն այն է նրանում, որ այն հավասար չափով ուղղված է հասարակության բոլոր անդամներին: Բայց թեմատիկայի հետ կապված՝ խնդիրը կարող է տարբեր լինել: Այդ պրոֆիլակտիկան կարծես թե, ենթադրում է, բնակչության մեջ այնպիսի անձանց ներկայություն, որոնց պետք է հեռու պահել հանցագործությունների կատարումից: Այդպիսի պրոֆիլակտիկան միշտ ներգործում է բնակիչների վրա՝ ընտրողական կարգով՝ հաշվի առնելով, որ ոմանք հակված են, օրինակ, զոդության, որոշները՝ շորթման, իսկ երրորդները՝ խարդախության կատարման: Դրա համար ենթադրվում է, որ միշտ կա կոնկրետ օբյեկտ, որը չի կարելի թողնել առանց ուշադրության:

Ընդհանուր պրոֆիլակտիկան տարվում է բոլորի համար՝ հաշվի առնելով որոշակի անձանց խմբերը: Այդ դրությունը պետք է հասկանալ հետևյալ կերպ՝ միանգամայն հայտնի է, որ շորթումը կատարվելու է վաղը և բոլոր ամիսներին, բայց հայտնի չէ, թե ով է այն կատարելու: Բայց, պրոֆիլակտիկան պետք է անցկացվի այնպես, որ այն հասնի այնպիսի անձանց, որոնք դրա կարիքն ունեն: Խնդիրն, անշուշտ, բարդ է: Դրա հաջող լուծման համար օգնում է այն, որ ընդհանուր պրոֆիլակտիկան կրում է ռեալ գործունեության «կարգավորման տարրեր»: Այն, կարծես թե, բացականշում է. «Մարդիկ, հանցագործություն մի կատարեք, դրա համար դուք պատժվելու եք»:

Հենց այդ մակարդակում է դիտարկվում հակահասարակական վարքագիծ ունեցող անձանց հայտնաբերման խնդիրը, նրանց անհատապես հաշվառումը, հանցագործության կատարման մտադրության հայտնաբերումը, կանխումը և կոնկրետ հանցավոր արարքի կատարման հակազդումը: Այդ ոլորտ են ներթափանցում օպերատիվ-հետախուզական միջոցառումները, չէ՞ որ նրանք էլ կողմնորոշված են կոնկրետ անձանց վրա, նրանց հանցավոր մտադրությունների կանխմանը և հակազդմանը:

Որոնողական աշխատանքների արդյունքում ստացված տեղեկությունները համակարգվում, ուսումնասիրվում, վերլուծվում են, և դրա հիման վրա օպերատիվ աշխատակիցները պլանավորում (ծեռնարկում) են կանխարգելման աշխատանքներ՝ ուղղված հանցագործության կատարմանը նպաստող պայմանների չեզոքացմանը կամ կրում են կողմնորոշիչ բնույթ անձանց պրոֆիլակտիկայի աշխատանքներում, իսկ առանձին դեպքերում՝ հանցագործությունը կանխվում է նախապատրաստության փուլում:

Հանցագործությունների քանակի և տեսակի վիճակագրական տվյալները,

համադրելով նախորդ ամսվա, եռամսյակի, կիսամյակի և տարվա ժամանակահատվածի տվյալներին հայտնաբերում են հանցագործության կատարման աճի կամ նվազման միտումները:

Մեծ նշանակություն ունի իրավախախտում կատարած անձանց բնութագրող վիճակագրական տվյալների խմբավորումը: Ինչպես ցույց են տալիս կատարված ուսումնասիրությունները, ավելի նպատակահարմար է այն իրականացնել հետևյալ հատկանիշները հաշվի առնելով՝ տարիքը, կրթությունը, ընտանեկան դրությունը, զբաղվածությունը, մասնագիտությունը, զբաղմունքը, աշխատանքի և ուսման վայրը, նախկին դատվածությունը և այլն: Նշված հատկանիշներն ունեն մեծ նշանակություն հետագա պրոֆիլակտիկ միջոցառումների որոշման համար:

Դիտարկվող հանցագործության կատարմանը նպաստող հանգամանքների վերաբերյալ օպերատիվ աշխատակիցները կարևոր տեղեկատվություն կարող են ստանալ ձերբակալված և կայանավորված անձանցից, ինչպես նաև վկաներից ու տուժողներից հարցում կատարելու միջոցով:

Շորթում կատարող անձանց արարքների խոչընդոտման և մերկացման (հակազդման) ամենահուսալի միջոցը օպերատիվ ստորաբաժանումների իրազեկվածության բարձրացումն է: Դրա համար օրենսդրի և իրավակիրառողի ձգտումները պետք է ուղղված լինեն, ամենից առաջ, գաղտնի գործակալների հետ համագործակցության ինստիտուտի արդիականացմանը և զարգացմանը: Օպերատիվ աշխատակիցները օպերատիվ-հետախուզական միջոցառումները կազմակերպելիս և իրականացնելիս, կապված շորթման պրոֆիլակտիկայի հետ, պետք է հատուկ ուշադրություն դարձնեն գաղտնի գործակալների հնարավորությունների օգտագործման վրա: Դա պայմանավորված է այն հանգամանքով, որ հանցավոր մտադրությունները և նախապատրաստվող հանցագործությունները կարող են բացահայտվել ոչ հրապարակային միջոցառումներով: Դրա համար գաղտնի գործակալները պետք է կողմնորոշվեն այդ հանգամանքների վերականգնման ուղղությամբ: Գաղտնի գործակալները հնարավորություն ունեն բացահայտելու պատճառների իրական բնույթը, որոնք դրդում են առանձին անձանց զբաղվելու հանցավոր գործունեությամբ, ինչպես նաև այն պայմանները, որոնք հանցագործներն օգտագործում են իրենց հանցավոր մտադրություններին հասնելու համար:

Շորթմանը նպաստող պայմանների և պատճառների հայտնաբերումը ընդհանուր կանխարգելիչ աշխատանքի սկզբնական փուլն է: Նպաստող պայմանների և պատճառների հայտնաբերումից հետո մշակվում և օգտագործվում են գործնական միջոցներ՝ դրանց վերացման կամ չեզոքացման ուղղությամբ: Այդպիսի միջոցները անմիջականորեն իրականացվում են ինչպես օպերատիվ, այնպես էլ բոլոր իրավապահ մարմինների և հասարակական կազմակերպությունների միջոցով, որոնց պարտականությունների մեջ են մտնում հանցագործությունների պատճառների, դրանց նպաստող պայմանների վերացմանն ուղղված միջոցառումները: Դա պայմանավորված է նրանով, որ հանցագործություն ծնող պատճառների էական մասն ու դրան նպաստող պայմանները գոյություն ունեն և դրսևորվում են տարբեր պետական մարմիններում, մասնավոր տնտեսություն-

ներում, հասարակական կազմակերպություններում, և անմիջականորեն չեն կարող վերացվել օպերատիվ աշխատակիցների կողմից:

Ձեռնարկվող կանխարգելիչ աշխատանքում մեծ նշանակություն ունի օպերատիվ ստորաբաժանումների փոխգործակցությունը ոստիկանության ստորաբաժանումների, դատախազության, արդարադատության, ինչպես նաև այլ պետական և տեղական ինքնակառավարման մարմինների հետ:

Հանցագործությանը նպաստող պայմանների վերացմանն աջակցող միջոցառումների իրականացման ժամանակ օպերատիվ աշխատակիցները պետք է հաշվի առնեն տարբեր սոցիալական գործոններ, որպեսզի ազդեն գործունեության արդյունավետության վրա: Այդպիսի գործոններից է զանգվածային լրատվամիջոցների դերի բարձրացումը:

Հասարակության զարգացման ժամանակակից փուլում զանգվածային լրատվամիջոցներն ի վիճակի են կատարելու և կատարում են այնպիսի գործիքի դեր, որը ներգործում է սոցիալական իրականության վրա և մտնում նաև հանցագործությունների կանխարգելման ոլորտ:

Պրակտիկայի վերլուծությունը վկայում է, որ քրեական պատասխանատվության ենթարկված անձանց ճնշող մեծամասնությունը մինչև հանցագործության կատարումը չի ենթարկվել պրոֆիլակտիկ ներգործության: Շատ դեպքերում դա բացատրվում է հաշվառման կարգի անկատարությամբ:

Ելնելով անձի և նրան շրջապատող միջավայրի առանձնահատկություններից՝ ընտրվում են պրոֆիլակտիկ ներգործության մեթոդները: Պրակտիկայում օգտագործում են երկու հիմնական պրոֆիլակտիկ ներգործության մեթոդներ՝ համոզման և հարկադրման: Նպատակը ինչպես հանցագործության կանխումն ու հակազդումն է, այնպես էլ մտադրության հայտնաբերումը: Աշխատանքը պետք է կազմակերպել այնպես, որ անհատը հրաժարվի դրանից ու ետ կանգնի հանցավոր ծանապարհից: Իսկ հանցագործություն կատարելու հսկում ունեցող անձանց հայտնաբերման խնդիրը բացասական ներգործություն ունեցող անձանց «աղբյուրի» հայտնաբերումն է:

Առաջինի տևությունը հաղորդման փոխանցումն է՝ նպատակ ունենալով ձևավորել որոշակի կարծիք պրոֆիլակտիկայի ենթարկված անձի գործողությունների վերաբերյալ: Կոնկրետ դեպքում իրականացվում է էմոցիոնալ և ինտելեկտուալ ներգործություն մարդու գիտակցության վրա, որպեսզի ակտիվացվեն բոլոր դրական որակները: Համոզման պրոֆիլակտիկ միջոցառումները կարող են իրականացվել ծանոթացման, նախազգուշական և դաստիարակչական հարցազրույցների ձևով: Անհատական պրոֆիլակտիկայի սուբյեկտների դերում կարող են հանդես գալ ոստիկանության օպերատիվ աշխատակիցները, այլ սուբյեկտներ, ովքեր կարող են դրական ներգործություն ունենալ:

Եթե համոզման մեթոդի կիրառումը դրական արդյունքներ չի տալիս, համապատասխան հիմքերի առկայության դեպքում կիրառվում են կարգապահական, վարչական, իրավական բնույթի ներգործության այլ միջոցներ: Այդ մեթոդի տևությունն այն է որոշակի իրավունքների և ազատությունների սահմանափակման մեջ է, ինչպես նաև որոշակի անձանց գործողությունների բացառմամբ՝ ընդ որում տվյալ անձի կամքից անկախ հանգամանքներով պայմանավորված, բա-

ցառությանը որոշակի վարչական միջոցների, որոնք ընտրում են այլ մարմիններ:

Հատուկ անհատական պրոֆիլակտիկան հիմնականում ուղղված է կոնկրետ տեսակի, խմբերի և կատեգորիայի հանցագործությունների կանխարգելմանը: Շորթման կանխարգելման միջոցառումները տարբերվում են իրենց հատուկ նշանակությամբ՝ կիրառվող քրեափորձագիտական միջոցառումներով և մեթոդներով, օպերատիվ տեխնիկայով: Կարելի է ասել, որ հատուկ անհատական պրոֆիլակտիկան իրենից ներկայացնում է օբյեկտների կոնկրետացում, որի վրա պետք է գործադրվի ներգործություն. այդ նպատակների համար օգտագործվում են հատուկ միջոցներ ու մեթոդներ: Հատուկ պրոֆիլակտիկա է կոչվում այն պատճառով, որովհետև մասնագիտական գործունեություն իրականացնողներն ունեն հատուկ և պրոֆեսիոնալ գիտելիքներ: Հնարավոր չէ, օրինակ, կիրառել մասնագիտական միջոցներ և մեթոդներ շորթման կանխման համար՝ չիմանալով այդպիսի ոտնձգությունների բնութագիրը, նրանց հնարավոր որակավորումները, վատ տիրապետելով նշված մեթոդներին, մեխանիզմներին և այլն:

Անհատական պրոֆիլակտիկան ցանկալի է սկսել նախքան հանցավորի կողմից հանցագործության կատարման վերաբերյալ որոշում ընդունելը: Դրա հետ մեկտեղ մի շարք դեպքերում ընդունված որոշումը իրականացվում է ոչ միանգամից, իսկ դրա համար գոյություն ունեն նրա վրա ազդեցություն գործելու օբյեկտիվ հնարավորություններ, որպեսզի վերջինս փոխի որոշումը, իր վարքագիծը: Հենց դա է կանխարգելման օժանդակությունը, իսկ արարքի հակազդումը որպես կանոն օգտագործվում է այն ժամանակ, երբ խոսքը վերաբերում է լրիվությամբ կանխված այնպիսի մի արարքի, որն արդեն սկսվել էր:

Հանցագործության կանխարգելման ձևերից մեկը կարող է հանդես գալ «վստահության հեռախոսի» կիրառման ընդարձակմամբ, որի միջոցով քաղաքացիները կարող են հանցագործությունների բացահայտմանը կամ հակազդմանը նպաստող զաղտնի տեղեկություններ հայտնել իրավապահ մարմիններին:

Շորթումն ունի մղումային և էմոցիոնալ բնույթ, նրանց հատկանիշը իրադրությունն է, հանկարծակիությունը: Նույնիսկ այդ դեպքերում ոտնձգությունը, նպատակ հետապնդելով ուրիշի գույքի հափշտակության, ոչ միշտ է ակնթարթային ակտ: Քանի որ այդպիսի ոտնձգությունը ժամանակի մեջ զարգացող գործընթաց է, ուստի և նրանց դեմ պայքարի հիմնական ճանապարհը պետք է իրականացվի անհատական աշխատանքի, հատուկ պրոֆիլակտիկայի միջոցով, իսկ կոնկրետ խնդիրը ժամանակին, միջամտումն է, այդ գործընթացի զարգացումը թույլ չտալն ու դրա կանխումը: Եթե դա հաջողվում է կատարել անհրաժեշտ փուլում, ապա թույլ չենք տալիս հանցագործությունը կատարվի, պոտենցիալ տուժողին պաշտպանում ենք հանցավոր ոտնձգությունից:

Անհրաժեշտ է նշել հանցագործությունների անհատական պրոֆիլակտիկայի միասնությունը՝ անկախ նրանից, թե ինչ ձևերով են դրանք իրականացվում: Լինի մասնագիտական, թե օպերատիվ-հետախուզական պրոֆիլակտիկա՝ դրանք միշտ ուղղված են կոնկրետ անձին և նրա վարքագծին: Այդ միասնությունը հաշվի առնելով՝ պրակտիկան նշակել է ներգործության որոշակի չափորոշիչներ: Ավելի պրակտիկ նշանակություն ունի վաղ անցյալում շորթում կատարած ան-

ծանց հայտնաբերումը: Այդ անծանց նկատմամբ, ինչպես ցույց է տալիս պրակտիկան, պրոֆիլակտիկան ավելի իրատեսական է, քանի որ նրանց մեջ դեռևս ձևավորված չէ հանցավոր վարքագծի կայուն ստերեոտիպը: Այստեղ պրոֆիլակտիկան հանդես է գալիս որպես կանխարգելման միջոց: Այդ նպատակին հասնելու և դրանից բխող խնդիրները լուծելու համար անհրաժեշտ է տեղեկությունների ներդրում, որի կարիքն ունի պրակտիկան: Տեղեկությունը պետք է վերաբերի հենց քրեածին վիճակին, ընդ որում գիտականորեն հիմնավորված, հղկված պրակտիկ փորձի վրա:

Ընդհանուր սոցիալական պրոֆիլակտիկայի միջոցների անցկացման հիմք է հատուկ քրեածին վիճակը: Ընդհանուր սոցիալական և հատուկ միջոցների միջև գոյություն ունի յուրահատուկ հետադարձ կապ, վերջինս օգտագործում է ոչ միայն հակաքրեածին ընդհանուր զարգացման ներուժն ընդհանրապես, այլ նաև նպաստում է նրա ճանապարհին կանգնած բավականին էական խոչընդոտների վերացմանը:

Այս առումով չի կարելի չհամաձայնել Բ.Խ.Տոլետրեկովայի այն կարծիքին, որ չկա անհրաժեշտություն ինչ-որ կրիմինոլոգիական ուսումնասիրության, որ համոզմունք ձևավորվի նրանում, թե հանցավորությունը՝ որպես սոցիալական նշանակություն ունեցող գերաճի գործոն, արգելակում է հասարակության բոլոր ոլորտներում դրական գործընթացների կենսագործունեությանը: [3] Սեփականության դեմ ուղղված հանցագործությունների կանխարգելման ոլորտում դրական արդյունքների հասնելու համար, ընդհանուր սոցիալական պրոֆիլակտիկայի հետ համատեղ, անհրաժեշտ է անցկացնել մասնագիտացված և նպատակաուղղված միջոցառումներ՝ սահմանափակող և չեզոքացնող բացասական երևույթների ակտիվացման դրսևորումների դեմ:

Դրա հետ միասին նույնիսկ անմիջական սեռային օբյեկտի հատկանիշներով տարբերվող հանցագործությունները (օրինակ՝ ավագակություն, կողոպուտ) կարող են էական աստիճանով համընկնել իրենց կրիմինոլոգիական բնութագրությանը, ծագմամբ, որը օբյեկտիվորեն պայմանավորված է համընկնման և նույնիսկ հայտնի պրոֆիլակտիկ միջոցների նույնականացման հետ:

Անխախտելի է մոտիվացիայի կապը հանցագործության պրոֆիլակտիկայի հետ: Առանց օրինաչափ գործընթացի մոտիվացիայի՝ ուսումնասիրության և ճանաչման հնարավոր չէ կանխագուշակել մարդու անհատական վարքագիծը, իրականացնել դաստիարակման գործընթացի դեկավարումը, ուսուցումը և ամբողջությամբ անձի սոցիալականացումը, իսկ հանցագործության պրոֆիլակտիկայի խնդրի պատճառով հնարավոր չէ մշակել իրավախախտման կանխարգելման գործուն միջոցներ՝ այն պրակտիկորեն կիրառելու համար: Այդ կերպ՝ առանց յուրահատուկ հանցագործությունների մոտիվացիայի հաշվառման (այդ թվում՝ շորթման), հնարավոր չէ հատուկ կրիմինոլոգիական պրոֆիլակտիկան հասցնել իր նպատակին:

Հանցավոր անձի խորն ուսումնասիրությունը, նրա մոտիվացիան, հոգեբանական վիճակը գտնվում են էֆեկտիվ պրոֆիլակտիկայի իրականացման գործունեության տակ:

Շորթման կանխարգելման, ինչպես նաև ամբողջ հանցագործությունների

կանխարգելման մարտավարությունը պետք է իրականացվի վիճակագրության օբյեկտիվ հաշվառման միջոցով:

Արդարադատությունը սկսվում է ոչ թե հանցագործությունը կատարելու պահից, այլ դրա հաշվառումից: Յուրաքանչյուր կոնկրետ հանցագործություն կրում է միայն նրա յուրահատկությունները և իրենից ներկայացնում է բնական պատահական երևույթ: Բայց ոչ բոլոր հանցագործությունների համակցության վերլուծության ժամանակ կարելի է երևան բերել որոշակի օրինաչափություններ: Որպեսզի ունենանք հանցագործության վիճակի լրիվ պատկերը, պետք է հաղթահարել մի քանի փուլեր՝ յուրաքանչյուր առանձին կատարված հանցագործության վերաբերյալ տեղեկություններ ձեռք բերելով: Ամենից առաջ՝ անձը, ով տեղեկություններ ունի հանցագործության կատարման մասին, պետք է հայտնի իրավապահ մարմիններին, վերջիններս էլ, իրենց հերթին, պետք է հաշվառեն այդ հաղորդումը և տվյալները մտցնեն պետական վիճակագրության մեջ: Սակայն այդ ճանապարհին կան շատ խնդիրներ՝ սկսած անձի իրավական իրազեկվածությունից, հանցագործությունների մասին տեղեկությունների բացակայությունից մինչև իրավապահ մարմինների կողմից իրենց աշխատանքի ընթացքում հաշվետու տվյալների խեղաթյուրում:

Խոսելով վիճակագրության հաշվառման օբյեկտիվության կարևորության մասին՝ հանցագործության կանխարգելման գործում անհրաժեշտ է նշել, որ դրա բացակայությունը բերում է վիճակի, կառուցվածքի, դիմամիկայի, օրինաչափությունների և տվյալ հակասօրինական դրսևորումների զարգացման միտումների մասին անտեղյակության: Ավելին՝ այդպիսի տեղեկությունների բացակայությունը հաճախակի բերում է հանցավորության դեմ պայքարի ուժերի ու միջոցների փոշիացմանը, մի շարք դեպքերում՝ օրենսդրական բարեփոխումների անիմաստ փորձերի և այլն:

Մենք գտնում ենք, որ վերը նշված խնդիրը իրենից ներկայացնում է յուրահատուկ «հաշվարկ կետից», հետագա գործընթացների որոշակի աստիճանի պայմանավորվածություն՝ կապված շորթման դիմակայության և նրա պրոֆիլակտիկայի հետ: Վիճակագրությունը պետք է լինի ռեալ, իսկ դրա համար անհրաժեշտ է փոխել զրանցված հանցագործության հաշվառման նկատմամբ պետական մոտեցումը:

Բռնությամբ զուգորդված շորթումների որակման գործող վիճակը չի նպաստում դրանց լրիվ և բազմակողմանի հաշվառմանը: Դրա համար էլ, երբ հանցագործությամբ միաժամանակ վնասը հասցվում է քրեական օրենսգրքով պաշտպանվող երկու օբյեկտների, պետք է յուրաքանչյուր հանցագործություն հաշվառել առանձին: Թեպետ այս դեպքում կատարված հանցագործությունների վիճակագրական թիվն աճելու է, սակայն առաջարկվող եղանակը թույլ է տալու ունենալ իրական պատկերացում քրեածին վիճակի մասին, ինչպես առանձին շրջաններում, այնպես էլ ամբողջ հանրապետությունում: Այդ թվում անփոփոխ է մնալու տվյալ տեսակի հանցագործություններ կատարած անձանց քանակը:

Խնդիրների իրականացմանն ուղղված «թափանցիկ» վիճակագրության ապահովումը կարևոր դեր է խաղում շորթումների կանխման ժամանակ: Հանցագործության հաշվառման օբյեկտիվ խնդիրն ինչքան երկար մնա անտեսված,

այնքան շատ խնդիրներ են ծնվելու: Այդպիսի խնդիրներից է, օրինակ, քաղաքացիների վիկտիմիզացիան: [4] Մասնագետներն այդ առիթով իրավագիտորեն նկատել են, որ ինչքան բարեհաջող տեսք է ունենում հանցագործության հաշվառումը, այնքան ավելի ինտենսիվ է կատարվում քաղաքացիների վիկտիմայնությունը, որը, հետագայում հաշվառված չլինելով, դադարում է իշխանության համար գոյություն ունենալուց: [5]

Վիկտիմոլոգիական պրոֆիլակտիկայի գերակայությունն այն է, որ, ի տարբերություն հանցավորության վերահսկման ընդհանուր-սոցիալական միջոցների, տնտեսական, քաղաքական, սոցիալական և պետական կյանքը կազմավորող գործոնների վերացումը պահանջող գործունեության տվյալ ուղղությունը չի պահանջում լուրջ նյութական ծախսեր և ժամանակի կորուստ: Այն համարվում է ավելի հեռանկարային և մարդասիրական, ինչպես նաև հենվում է բոլոր մարդկանց ինքնապահպանության ձգտման ու հոգեբանական յուրահատկության վրա:

Ընդհանուր վիկտիմիոլոգիական միջոցառումների նպատակը պետք է հանդիսանա անձանց վրա ներգործությունը, որոնց վարքագիծը (անզգույշ, թեթևամիտ, հրահրող և այլն) ստեղծում է նրանց նկատմամբ շորթումների կատարման բարձր հավանականություն, ինչպես նաև այնպիսի անձանց, որոնց ապրելակերպը նպաստում է իրադրության ստեղծմանը, նպաստում կոնֆլիկտի առաջացմանը և ազդում հանցագործության կատարման մոտիվացիայի վրա: Այդ իմաստով մենք լրիվությամբ կիսում ենք Ն.Կ.Կատովայի այն կարծիքը, թե վիկտիմոլոգիական նախազգուշացմանն ուղղված հատուկ միջոցառումներն իրենց նպատակով հանցագործության կատարման պատճառի վրա ունենում են ոչ այնքան ազդեցություն, որքան ուղղված են նրանց մոտիվացիայի վրա ազդեցություն ունեցող պայմանների վերացմանը: [6]

Քրեածին լարվածության պայմաններում, երբ ընդհանուր սոցիալական պրոֆիլակտիկայի միջոցները շատ երկարատև են և ժամանակ պահանջող, հատուկ բնույթի միջոցները ընդունակ են վճռականորեն ազդել շորթման վիճակի վրա: Հատուկ տեղ է զբաղեցնում կրիմինոլոգիական միջոցառումների կազմակերպչական այնպիսի ձևերի հաշվառումը, որը կարող է արտացոլել դրանց կատարման իրական պատկերը:

Շորթման կանխարգելման միջոցներից է նաև քաղաքացու անձնական անվտանգության համակարգի զարգացումը, որն իր արծարծումը պետք է գտնի նաև զանգվածային լրատվամիջոցներում:

Այսպիսով՝ առաջարկում ենք. եթե մեկ հանցավոր գործողությամբ վնասը միաժամանակ հասցվում է քրեական օրենսգրքով պաշտպանվող երկու օբյեկտների, ապա պետք է յուրաքանչյուր հանցագործություն հաշվառել առանձին: Օրինակ, եթե շորթումը զուգորդվել է առողջությանը ծանր վնաս պատճառելով (ԼՂՅ քր. օր-ի 182-րդ հոդվածի 3-րդ մասի 4-րդ կետ), ապա այն պետք է հաշվառվի որպես 2 հանցագործություն, այլ ոչ թե մեկ հանցագործություն:

ՃԱՆՈՅԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Տե՛ս Կурс советской криминологии: Предмет. Методология. Преступность и ее причины. Преступник. М., 1985, стр.15.
2. Տե՛ս Концепция (основные направления) деятельности органов внутренних дел по предупреждению преступлений. М., 1998, стр. 25.
3. Տե՛ս Толеубекова Б.Х. борьба с преступностью в контексте закона Республики Казахстан «О национальной безопасности Республики Казахстан»: материалы междунар.науч.-практ. конф. Алматы, 2002, стр.57.
4. Վիկտիմոլոգիական հանցավոր ոտնձգություններից հիստորիայի և անհանցելի սուսեղևի գործընթաց է:
5. Տե՛ս Горяинов К.К. Улучшение взаимодействия граждан и милиции: доступ к правосудию и система выявления, регистрации и учета преступлений К.К.Горяинов, В.С.Овчинский, Л.В.Кондратюк: М., 2001, стр. 21.
6. Տե՛ս Котова Н.К. Виктимологические проблемы криминальной агрессии. Алматы, 2001, стр. 92-93.

ՐԵԶԻՍԵ

Некоторые из основных проблем предотвращения вымогательства Эрик Арзуманян

Говоря о значении объективного статистического учета в деле предупреждения преступлений, необходимо отметить, что его отсутствие приводит к незнанию состояния структуры, динамики, закономерности и тенденций развития данного противоправного явления. Более того, отсутствие такой информации приводит зачастую к распылению сил и средств в борьбе с преступностью, в ряде случаев к бессмысленным попыткам реформирования законодательства и т.п.

Итак, если одним противоправным действием нанесен ущерб одновременно двум объектам, защищенным уголовным законом, было предложено рассматривать каждое преступление отдельно. Например, если вымогательство сопровождалось нанесением тяжких телесных повреждений (статья 182, часть 3, пункт 4 УК НКР), тогда оно должно рассматриваться не как одно, а как два преступления.

Необходимо отметить важность совместных мероприятий по предотвращению преступлений независимо от того, в скольких видах они проявляются.

SUMMARY
Some of the Major Problems Preventing Extortion
Erik Arzoumanyanyan

Dwelling upon the meaning of objective statistical calculation in the crime deterrence we should note that its absence leads to the lack of knowledge regarding the structure condition, the dynamics, regularity and tendencies of the development of the illegal occurrence in question. Furthermore the lack of such information often leads to the dispersion of strength and dissipation of resources in the lowering of criminal activity; in the number of cases to the meaningless attempts to reform the legislation and so on.

Thus, in case of an unlawful inflicted action simultaneously two objects which are under the protection of law it was offered to consider each case separately. For example, if the extortion was accompanied by hard physical injuries (asset 182, part 3, point 4 NKR CC), in this case it should be tried not as one crime, but as two crimes.

It's necessary to note the importance of joint enactments on crime deterrence notwithstanding the types of its development.